



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



LBN

1553



1900


# ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՊԱՏԻԿ ՏՈՀՄԻՆ

## ԵՐՈՒՍՆԴԵԱՆՑ

### Ի ՍԱՆԱՀԻՆ


Հանեալ ՚ի լիշատակարան դրուածոց Առաստամ Բէզի  
Երգնկեանց Հաղբատեցւոյ



ԹԻՖԼԻՍ

Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան

1896.



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐԻ ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՆԵԼԻ ՁԻՈՅԵԱՆՑ  
ԴԻ ԽԵՂԱՄԱԿ Խղօք Խրոյ Բարսեղի Փարղուզաղեանց:

## ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ



Ն Ա Խ Ա Պ Ա Տ Ի Ւ Տ Ո Հ Մ Ի Ն

## ԵՐՎԱՆԴՅԱՆ

Ի Ս Ա Ն Ա Հ Ի Ն

ՀԱՆԵԱԼ Ի ՅԵՋԱՏԱԿԻՐԱՆ ԳՐՈՒԱՆՑՈՅ ՈՈՍՏՈՄ ԲԵՇԻ  
ԵՐՎԱՆԴՅԱՆ ՀԱՂԲԱՏԵՑԻՈՅ



РОДОСЛОВIE ПОЧЕТНАГО РОДА ЕРВАНДЯНЦЪ ВЪ САНАИНЪ.  
Извлечено изъ рукописныхъ памятниковъ Ростомъ бека Ерзикянцъ  
Ахпатскаго.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպար. Յ. Մարտիրոսյանցի. | Типогр. И. Мартиросіанца  
Օրբելіանовская ул., д. № 1 | 2.

1896.



Дозволено цензурою. Тифлисъ, 27-го ноября 1896 года.

29 565

4553-60

ԱԹ ԲԱՐԵԿՐՈՆ ԹԱԴԻՇՈՍ ՔԱՀԱՆԱՅ ԵՐՈՒՄՆԴԵԱՆՑ  
ՍԵՆԱՀՆԵՑԻ:

՚Ի մանկական տիոջէ իմմէ հետամուս եղէ հաւա-  
ֆել ՚ի զրուցաբութեանց հինաւուրց աւանդապահ  
Լուեցի ծերունեաց զտոհմական վեպս, գիտել զծա-  
գումն նախամեծար ցեղից, ՚ի վաղուց անտի բնակե-  
լոց ՚ի գիւղօրայս Լուոյ. նա եւ գրել զհատուկուր  
պատմական դիպուածս ըս զրուցաց ծերունեաց ՚ի  
մերում Զորագետի վասն ապազայ պիտոյից. այժմ ՚ի  
բազմավէլ յիշատակարանէ իմմէ միմիայն հանեալ  
զզրուածս վասն նախնեաց բոց ազգատոհմին Երուան-  
դեանց, ՚ի նշան սիրոյ նուիրեալ Զերդ բարեկրօնու-  
թեան որպէս բարեշառաւիդ Երուանդեանց տնիմին  
ամենայարզանօք ասեմ. ընկալ ի հանոյս բարերար  
կամացդ զայս կարհառօս բանս

՚Ի ՈՊՈՍՏՈՄ ԲԷԴԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑ : ՅԱՐԵՍԵՑԻՈՅ.

՚Ի 10-Ն Պարտի  
1888 ամի  
՚Ի Ք. Թէլու:



Յիշատակարանի յօդ. ԺԲ.

Ա.ՊԱՍՏԱԿԱՐԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻԱԿԱՆԱՅ ՚Ի ԿՈՂՄԱՆԱ ՎԵՐԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ:



բրեւ խոպառ բարձաւ աղղապաշտպան  
թագաւորութիւն չայոց, խեղճ չայ-  
աստունն ոտնակոխ եղեւ ՚ի պէսպէս  
անողորմ միջնադարեան բռնակալաց,  
անտերունց բնակիչք երերեալ, տա-  
տանեալ ընտրեցին զլեռնակողմանս  
Լոռւոյ, Զորագետի, Գեղարքունուոյ և  
Սիւնեաց, ապաստան եղեն ՚ի քարայրիտ,  
՚ի փապարս և յամուրս անմատչելի  
լեռնաձորոց առ ՚ի աղատել զտառապեալ զերգաստանս  
իւրեանց: Բաղումք թողեալ զբուն ծննդեան տեղիս տե-  
ղափոխեցան ՚ի վերին կողմանս Հայաստանի ՚ի Վրացտուն  
և ՚ի լեռնաբնակ ամրապինդ վայրս Կովկասեան լերանց:

՚ի ժամանակս անընդհատ արշաւանաց և ասպատա-  
կանութեանց լեռնական Լեկզաց, տիրապետող Պարսկա-  
կան խանից և Օսմանեան դաւառապետ Փաշալից միմիայն  
Լուեցիք, Զորագետցիք, Գուգարեցիք, Ռւտէացիք և Վե-  
րին չայք, փոքր ինչ անդորրու կային յամրոցս լեռնա-  
ձորոց և քարաժայուից, իսկ Ղարաբաղն Սիւնեաց և Արցախն  
ունէին զինքնագլուխ աղատակամ մելիքութիւն և պահ-  
պանեցին Հայկական անկախութիւնս մինչև յվերջ 18  
դարուն: Յաւուրս թագաւորութեան Պարսից Մեծին Ճահ-  
Աբասի յոյժ դօրացեալ և յառաջացեալ էին բաղմաթիւ  
տիրապետող Մելիք Սիւնեաց և Բաղաց երկրին, որք  
զծագումն ազգի իւրեանց սկզբնաւորէին ՚ի հին թա-

զաւորացն Հայաստանի: Աշխարհաշէն և հեռատես թագաւորն Պարսից Ճահ-Աբաս տեսեալ դքաղաքական վարչութիւնս ինքնազլուխ Հայ մելիքացն և դքաջութիւնս նոցա ընդդէմ Օսմանցւոց՝ ի 1603 ամին տուածինն եղեւ ՚ի Հաստատել զՄելիք տիտղոսն, որ նշանակէ Արաբերէն «Արքայ կամ Կօրօլ \*») ըստ Եւրոպացւոց: Հաստատ ինքնազլուխ իշխանապետութիւն այսոցիկ մելիքաց ՚ի հին դարուց անտի սկսեալ տեսեաց ընդ երկար ժամանակս ՚ի Ղարաբաղ — այնէ մինչև ցղալուստ Թուսաց ՚ի Կաւկաս: Ղարաբաղն ընդ իշխանութեամբ հին մելիքացն — Հայոց էր մի պարզ Հայկական տէրութիւն. բաժանեալ ՚ի հինդ նահանգս = Քրաբերդ, Գիւլիստան, Վարանդ, Խաչէն, Թուզախս և Ռւտի — Թուզար: Իւրաքանչիւր նահանդ ունէր առանձին կառավարիչ ՚ի Հայ պայազատ մելիքացն: Հետզետէ յարեան ՚ի Ղարաբաղ մեծահռչակ և երեւելի մելիքք, իշխանք և բէդք. յորոց զաւածին տեղին կալան Մելիք-Ավան-Խանն՝ հրամանատարն ըոլոր Հայկազն մելիքաց, իշխան Թաւիթ բէդն Սիւնեաց 1724 թ. և ապա սպարապետ նորա անպարտելին Մխիթար 1727 թ. որք իսպան ջնջեցին յաշխարէն Սիւնեաց զամենայն թշնամիս, պաշտպանեցին զհալրենիս իւրեանց մինչև ց1730 ամն — ցաւուրս Մելիք-Յովհաննիսի Ռւտէացւոյ ՚ի գաւառին Ղաղախի:

Պարսկաստուն յետ բազմատեսակ յեղափոխութեանց ՚ի 1732 թ. բազմեցոց յաթու Կիւրոսի երեւելին Նադիր-Ճահ, որ հալածեալ վանեաց դՕսմանցիս, տիրեաց մեծի մասին Հայաստանի և Վրաստանի և ապա մալրաքաղքին Տփխիսալ: Հասեալ ՚ի Գանձակ և ՚ի Ղարաբաղ տեսեալ դքաջութիւնս Հայ մելիքացն, որք քաջութեամբ պաշտպանեալ էին զհալրենիս իւրեանց, բաշխեաց մեծամեծս պարզես, և կրկին Հաստատեաց դիշխանապետութիւնս

\* Եւրոպաց բացէս Հայոց:

նոցա յորդւոց յորդիս լինել տէր և իշխեցօղ սահմանաց իւրեանց: Յօրէ աստի Մելիքքն ունելով միմիայն զկախումն ՚ի ջահէն Պարսից, օր ըստ օրէ յառաջացեալ ընդարձակեցին զիշխանութիւնս և զզօրութիւնս իւրեանց մինչև յ1746 ամն, այն է ցմահն Նադիր-Ջահի, բացարձակ տէր և իշխան լինելով ՚ի Ղարաբաղ, ՚ի վերջոյ գտին իւրեանց սխերիմ Հակառակորդ զդլիաւոր պետն Ջուանշիրեան թափառական ցեղի դՓանայ խանն:

Հրովարտակաւն Նադիր-Ջահի իշխանապետութիւն չակազեան Մելիքացն Ղարաբաղի էր ժառանգական յորդւոց յորդիս: Անդրանիկ որդին ՚ի տան Մելիքացն իետ մահուան հօրն առնոյր զմելիքական իշխանութիւն. իսկ միւս որդիքն որպէս երկրորդական սերունդք ՚ի նոյն մելիքաց ստանալին զմասն բաժնի հալբենի կալուածոց ՚ի սնունդ իւրեանց, և բնակէին առանձին ՚ի գիւղօրալս ընդ տեսչութեամբ աւագ մելիքի որպէս զիւղապետ, բէզ անուամբ. ուստի հետ զհետէ բաղմացան երկրորդական տոհմական մելիքք, ՚ի գիւղօրալս Ղարաբաղու որպէս գիւղատէր և ստանալին ՚ի ժողովրդոց զհասանելի հարկս զիւղօրէից իւրեանց: ՚ի թիւս այս օրինակ գիւղատէր Մելիքքէզացն յայտնի էր և Մելիք-Միքէլն պապն Երուանդէս Բօղինեանի մականուանեալն Պիծիկ-Մելիք, որ քաջութեամբ և ծառայութեամբ առաջի նախամեծար Մելիքացն եղիտ զպատիւ և զյարգանս, և կայր յաչս տիրապետող մելիք իշխանապետացն սիրելի և հաւատարիմ յամենայն դործս ՚ի Ղարաբաղ:

Աղա-Մահմատ-խան շահն պարսից զայրացեալ ՚ի վերալ յանդուգն և ինքնազլուխ արարմանց Իբրահիմ խանի բաղմաթիւ զօրօք յարձակեցաւ ՚ի Ղարաբաղ, և ապա զիմեալ ՚ի Վրացտուն քանդեաց և աւերեաց սրածութեամբ և Հրկիզութեամբ 1795 թուականին. զմայրաքաղաքն

Տփխիս, դարձեալ յետս տիրեաց զուշի բերդին, որ անօր եղիտ և զզերեզման իւր։ Յետ անչափ փոթորկալից արշաւանաց, անընդհատ ներքին և արտաքին պատերազմաց Ղարաբաղն և շրջակայ դաւառք նորա դարձան յարեան ասպարէզ։ 'Ի ժամանակս այս արխւնահեղ պատերազմաց շինականք ոչ կարացին բայ ժամանակին ցանել և հնձել, սարսափելի երաշտութիւն 1797 ամի ցամաքեցոց զբոլոր բուսականութիւնս, և ցանքն ոչնչացան, կարծես ընութիւնն ինքնին միաբանեալ էր ընդ մարդկալին գաղանութեանց դարձուցանել ղղարաբաղ ամալի անապատ։ Սպառեցան ուտելիք ժողովրդոց, մարդիկ նման անասնոց սկսան կերակրիլ խոտոք և արմտեօք, և 'ի պատճառս անսովոր ուտելեացն. եղել մահ տարաժամ, ծածկեցաւ երկիրն դիակօք մարդկանց։ Յետ այսորիկ երևեցաւ 1798 թ. ժանտախտն, որ լրացոց զպակաս զժբաղդութիւնս սովալլուկ մնացեալ ժողովրդոց։ Հայտընակ Ղարաբաղն զրէ-թէ դատարկացաւ 'ի ժողովրդոց, որք թողեալ դհայրենիս 'ի Պարսկաստուն, 'ի Թուսաստուն և 'ի Վրացտուն, զտանել զօրական կտոր հացի։ Անբաղդ Հայք դարադու վիճակեցան յետին թշուառութեանց—տանջեալք 'ի սովու եկին պանդիստեցան 'ի Վրացտուն, և անմարդասիրաբար ընկալեալք 'ի Վրաց՝ սկսան առնել մուրացկանութիւն 'ի դրունս Վրաց։ Իշխանք Վրաց ստիպեցին տանջեալ և աղքատացեալ Հայոց զրել ճորտ, որպէս զի փոխարէն ճորտութեան կերակրեսցեն զնոսա։ Ողորմելիքն մի կտոր հացի վաճառեցին զզաւակունու իւրեանց։ Վրաստանի Հայ ճորտերն մինչեւ ցվերջին ժամանակս այստեսակ հանգամանօք զոհ զնացին։

'ի 1798 թ. վախճանեցաւ Հերակլ արքայ Վրաց, յաջորդեաց նմա որդի նորին Գէորդի ՓԲ։ Իբրահիմ խանն շատ ցաւեցոց զհայ մելիքս և զհոդեորականս, իմանալով զյարաբերութիւնս նոցա ընդ Թուսաց։ Կոչեաց առ ինքն

զմելիք Մէջլումն և զմելիք-Աբովն բանտարկեաց, որք յետոյ դերձեալք՝ ի կապանաց բանտից փախստական անկան ՚ի Վրացտուն։ Իբրահիմ խանն տեսանելով զվնասակար ձեռնարկութիւնս Ռուսաց ընդ դէմ իւր թունաւորեաց զՅովհաննէս Կաթողիկոսն, քարուքանդ արար զերկիրն մելիք Մէջլումի և Աբովի, Հաղարաւոր Հայք ՚ի սուր մաշեցան, Հաղարաւորք նահատակեցան, և այլ Հաղարաւորք սոսկալի տանջանօք բոնադատեցան թողուլ զքրիստոնէութիւն։ և ՚ի վերջոյ բազումք թողեալ զբուն տեղիս ծննդեան իւրեանց տարագէմ գնացին որոնել ինքեանց ասլահով տեղիս ՚ի Ճամշադին, ՚ի Ղաղախ=Բօրչալի և ՚ի Վրացտուն։

՚ի սմին զառնաղէտ ժամանակի մելիք-Միքէլն Գորդէնեան տեսեալ զվտանդ կենաց Գերդաստանի իւրոյ առեալ զորդիս և զժոռուունս իւր եկն բնակեցաւ ՚ի զիւզն կունէն, ՚ի Ղաղախ, (որ ապա Մելիքի և յետոյ Բօղի զիւղ կոչեցաւ)։ գնեաց զկալուածատեղիս այն է զվարելահոզ, ջրաղացս, զայգիս և զտնատեղիս՝ հիմնեաց ասո զհաստատ բնակութիւն իւր, մնալ ասոտ մշտապէս վասն ազատ պահելոյ զտոհմականս իւր ՚ի Հարստահարութեանց բոնակալաց ժամանակին։

Յետ մահուանն չերակլեալ Բ. Գէորգի արքայ Վրաց՝ նպաստաւոր Համարեաց բնակութիւն Հայ մելիքաց բաղմաթիւ Հսկատակօք իւրեանց ՚ի Վրացտան, որպէս զօրաւոր դաշնակիցք օդնական լինիլ ընդ յետականուց լեռնականաց և ներքին երկպառակութեանց անդամոց արքունական զերդաստանին, վասն որոյ չարութեամբ կատարեաց զպահանջ նոցա՝ շնորհեաց Մելիք-Դումչուտին զգաւառն Լոււոյ իւր սահմանօքն, Մելիք-Փրիդունին զմասն Բօրչալուի և Աղջայ-Կալան։ իսկ Մելիք-Աբովին զգաւառն Բօլնիսոյ իւր սահմանօքն։ Օր ըստ օրէ զօրացան, քաջացան այս մելիքներն ՚ի Վրացտանի։

Հայք Ղարաբաղի առ ժամանակ վերաբնակեալ՝ ի գանձակ ետուն օծանել զՍարգիս եպիսկոպոս Հասան-Ջալեանց առանձին Կաթողիկոս վասն ինքեանց, և յորժամ դադթեցին՝ ի Վրացտուն դարձեալ ցանկացան անկախ իշխանութեան տնիկ առանձին Հռոմեոր Տէր զՍարգիս Կաթողիկոսն, և մնալ՝ ի ներքոյ հոգեւոր իշխանութեան նորա. վասն որոյ յորժամ մելիքներն իւրեանց ժողովրդականոք դադթեցին՝ ի Վրացտուն Հասան-Ջալեան Սարդիս Կաթողիկոս Աղուանից ևս իւր ազգականոքն տեղափոխեցաւ՝ ի Թիֆլիս 1797 թ. և ընկալեալ եղեւ մեծաւ յարդանոք՝ ի Գէորգի թագաւորէն, որ հրամանատարութեամբ Ղուկաս Կաթողիկոսի ամենայն Հայոց կարգեաց զՍարգիս Ջալեան որպէս Արքեպիսկոպոս Վանահայր Հաղբատակ վանից և միանգամայն վիճակաւոր առաջնորդ թէմին Վրաստանի՝ Կախէթի, Քարթլի, Սոմխէթի և Համայն Հայ դադթականացն Ղարաբաղու:

Վերջապէս Բօղին Մելիք-Միքէլեան ճնշեալ՝ ի որի կայից յափշտակողաց և՝ ի բէգաղնէից դաւառակին Ղաղախի հարկադրեցաւ վերստին թողուլ զսեպհական կալուածս հօր իւրոյ՝ ի Կունէն տեղափոխեցաւ՝ ի լեռնակողմանս Սօմխէթի՝ ի Բերդագիւղն Ճամշուլտէ, ունիլ ապաստանարան ինքեան ընդ խաղաղասէր Ղարաբաղցի ընակչացն, որք անդորրու կային ընդ վարչութեամբ քաջարի մելիք-Աբովի, որ օր ըստ օրէ՝ ի ձեռու բերէր որիշ հողեր և տեղեր, այնչափով որչափ առ աւելանալին քնակիչք երկրին Սօմխէթի:

Աստ՝ ի Ճամշուլտէ բնակեալ Մելիք-Միքէլեան Բօղին պարապէր տուր և առութեամբ գիւղէ՝ ի գիւղ շրջելով որպէս չարչի (մանրոնածախ) գտանելով զապրուստ կենաց ընտանեաց իւրոց, հուսկ յետոյ Յարութիւն որդին Բօղինի՝ ի Ճամշուլտայէ վերաբարձեալ՝ ի Թիֆլիս բնակեցաւ՝ ի

Հաւլաբար, և աստի ՚ի զիւղն Խարբուխի մերձ ՚ի սուրբ Սարգիս ուխտատեղին կալեալ զտեղի բնակութեան շինեաց անդ տունս, որոց մինչեւ ցայսօր տիրեն ՚ի նմանէ շառաւիղեալ ազգականք նորա, մնացեալք ՚ի Թիֆլիս անուանակոչութեամբս Խանդամեանք:

Թոռն Բօղինի Երուանդէս աղաւաղեալ փոխադարձ տառիւք է Վանէս ամուսնացեալ ընդ դստել Տէր-Յովհանի Վէրմիշեանց ՚ի Սօմխէթ ՚ի Ճամշուլլէ խաչեղբարութեամբ իշխան Զաքարիալի Արդութեանց, որոյ լորդորանօքն տեղափոխեցաւ ՚ի Թիֆլիզոյ ՚ի մադան պղնձէ Հանքն Լալվարու. կարգեցաւ ՚ի նմանէ վերակացու ՚ի վերայ մշակացն և գործավարացն պղնձէ Հանքի: Վասն արխաջան և Հաւատարիմ ծառայութեանցն ստացաւ ՚ի խաչեղբօրէ իւրմէ որպէս պարզե զայդետեղի ՚ի Սանահնաձոր և ՚ի զիւղն Սանահնի տնատեղի և զիւղատնտեսական պատկանելի կալուածու:

Իսկ նախ քան վերաբնակիլն իւր ՚ի Սանահնի Երուանդէս իվանէսն ՚ի պատիւ խաչեղբօր իւրոյ իշխան Զաքարիալի Արդութեանց արար մեծածախ հացկերովիթ, Հրաւիրեաց զնա ՚ի տուն իւր բոլոր ընտանեօք, կերին, խմեցին և ուրախ եղեն, ՚ի ժամ Հրճուողական խրախնանին իշխանուհին Թուսուղան Արդութեանց ձևացուցեալ զանձն իւր իբր մտերիմ բարեկամ կոչեալ առ ինքն զԵրուանդէս—իվանէսն ասաց. «Իմ սիրելի որդեակ, զիտեմ, որ զոք թղթեր ունիք Նազիր-Ճահից, բեր տեսնեմ, ինչ թղթեր են, ժամանակով ձեզ պէտք կլինի թէ ոչ, ջոկենք, որն լաւն է ու ձեզ պիտանի պահենք ձեր որդոց համար»: Պարզամիտ Երուանդէս—իվանէսն լուեալ զբարեկամական խօսս նորա, անմիջապէս զամենալն թուղթս, սիդէլս և զտոհմագիրս Մէլիք-Միքայէլի փաթաթեալ ՚ի վերայ կոլոլ փայտի բերէ տայ իշխանուհւոյն և ինքն

գառնայ առ Հրաւիրեալ կոչեցեալսն շարտնակել կեր ու  
խումն:

Իշխանուհին՝ որ նստեալ կայլ առաջի վառարանին  
մի առ մի տնտղեալ զանպիտանսն ՚ի բաց եղեալ, և զօ-  
րինաւոր սիդէլս ՚ի մի ժողովեալ առանց խղճմտանաց  
ձղեց ՚ի վառած կրակն, ՚ի միջի բաղմատեսակ լետկա-  
րաց էր ծաղկէ նկար և ուկետառ հրովարտակն, տուեալ  
՚ի Նաղիր-Ճահէն Մելիք-Միքայէլին վասն մելիքական  
ազգատոհմութեան նորա: Վայրն իվանէսի Գարանն տե-  
սեալ դայն, վեր թռաւ և ըշտապեցաւ հանել ՚ի վառած  
կրակէ անտի զտոհմագիրսն, բայց ՚ի զուր, արդէն կրակն  
ալրեալ էր զամենն. միմիայն կարացեալ էր ՚ի Հրոյ ան-  
տի հանել կիսալրած, մրոտած կիսաթերթն անդին տոհ-  
մարագրին, և այն բոլորովին անպիտանացեալ և խոպա-  
անվերծանելի: Այօրինսակ պատրողական ձեռնարկութեամբ  
անխղճմտանք իշխանուհին վառեաց ՚ի հուր զամենայն  
զոկումէնսա Մելիք-Միքայէլի, որ ամենայն զգուշութեամբ  
պահպանիւր ՚ի տան Մելիք-Միքայէլեան, Բօղինեան Եր-  
ուանդի: Եւ կիդանօղ հուրն դարձուց ՚ի մոխիր զտոհմա-  
րագիրս ցեղաբանութեան տոհմին Երուանդեանց ՚ի ձեռն  
անհեռատես ժառանգի նոցա իվանէսի: Վայրն իվանէսի  
Գարան շատ բարկացեալ առ այս ճշեաց և անպատուեաց  
զիշխանուհին, մինչ անվայել անէծք նորա լոեցին խրախ-  
ճանասէր բաղմականքն առ ՚ի հանդարտել զբանակուխո  
երկուց կանանցն, իշխանն Զաքարիա լորդորական բան-  
իւք դադարեցուց զնոսա, խոստանալով տալ լինքենէ զնոր  
վկայութիւն զիտութեամբ բաղմականացն վասն ծաղման  
Մելիք-Միքայէլի ՚ի մելիքական ազգատոհմէ, փոխարէն  
ալրեցեալ իսկական հրովարտաքին Նաղիր-Ճահի, որ  
անզգուշութեամբ ալրեցան: Այսպիսի կորուստ հնաղարեան  
տոհմագրոց շատ են պատահեալ ձեռամբ մարդագող

նախանձախնդիր իշխանաց, որք բազում ջանիւք գուն զործէին ոչընչացուցանել զաղգատուհմութիւնս նորաբնակ աղնուականաց և մելիքաց, մանաւանդ այնմ միջոցի բազմացեալ էին 'ի Ղարաբաղաց, աղնուականք և մելիքք 'ի գիւղօրաց Լոռու նահանդի, 'ի վնաս աղղատոհմին տեղական իշխանաց, որք ջանալին որսալ և արկանել զնորաեկ ժողովուրդս 'ի ցանցս որոգայթից խրեանց, ճոռոմարանութեամբ խոստանալին բազմաց զբազում ինչս, կարգէին 'ի նոցունց զիւղապետո, տանուտէրս; Նորահաստատ գիւղատէրն (քեխայն) ունէր իրաւունո ստանալ 'ի գիւղացւոց զմի որոշ մասն վարուցանքի կամ առհասարակ բերքի մշակութեանց, նաև ունէր ազատ վարելահողս և զիւղական կալուածս և մեծապատիւ համարիւր առաջի իշխանաց, մելիքաց և քալանթարաց: Բազումք յազատաց ալապէս կորուսեալ տոհմական Պարգևագրոց, զրկեալք խորագիտութեամբ օձաբարու իշխանաց 'ի կալուածոց և 'ի սեպհական գիւղօրէից, վիճակեալ են անբաղդութեանց դասիլ 'ի շարս ստորակարդ ժողովրդականաց:

Յետ աւարտելու իմ զընթացս ուսմանց 'ի Ներսիսեան դպրոցի 1842 ամի գնացի 'ի հայրենիս իմ 'ի չաղքատ 'ի տեսութիւն ծնողացս: Մերձաւոր բարեկամք հետղետէ դալին 'ի չաղքատ շնորհաւորել զգալուստ իմ, որչափ այժմ մտարերեմ 'ի թիւս աւանդապահ ծերունեացն էին. Ճնողեցի տանուտէր Վէրանն Բէդ-Բաշեանց, Ճօնկանեցի Անդրիաս քեխայ Վարդումեանց, Օձնեցի Աբաս քեխայ Արովեանց, Դաեղեցի Յովհաննէս Ազայ Թումանեանց և Սանահնեցի Յարութիւն Մուրադեանց. որպէս հինաւորց ընտիր աւանդապահ վիպասանական անցեալ անցից, զկնի ընթրեացն 'ի ձմեռան զիշերս նստեալ շուրջ զվառարանաւն ծխէին զչիրուխս և երկար զրուցարանութեամբ վիճէին զհնադարեան անցից և աղգաբանութեանց խրեանց: Մինն

ասէր, ես Տէղ-Բաշեանց յազգէն եմ, մինն թէ Վարդունի եմ, միւսն Մելիք-Արովի ցեղիցն եմ, միւսն ես Մամիկոնեան եմ, իսկ այլք սեփհականէին ինքեանց զտոհմանունս նախնի նախարարաց Հայոց: Ես ունկն դնելով զուարձալի զրոցաբանութեանց նոցա սկսեցի մի ըստ միոջէ զրել զխօսակցութիւնս նոցա որպէս աւանդութիւն Հնախօս ծերունեաց, 'ի մէջ որոց երևէին պատմական ճշմարտութիւնք, որք կարեն 'ի վերջոյ լուսաբանել անցեալ պատմութիւնս տոհմին նախարարաց, ցիրուցան եղելոց 'ի կողմանս Վերին Հայաստանի:

Մեծապատիւ իշխանն Արդութեանց կատարեաց ըգխոստոմն իւր, տալով Մելիք Միքայէլեան Բօղինեան Երուանդին զվկայական 'ի տեղի ալրեցեալ Նադիր-Ճահեան Հրովարտաքին. որպէս պատմեաց Հարիւրամեալ ծերունի Պետրոս վարդապետ Ճինողեցի, և Հնախօսասէր Յարութիւն Արքեպիսկոպոսն Տէր-Բարտեանց վերջին առաջնորդն Սանահնի: Յետոյ Երուանդէսի մայր Գարանն դիմեալ առ Հասան-Ճալալեանց Սարդիս անուանեալ Կաթողիկոսն Ազուանից, որ նատէր առաջնորդական իշխանութեամբ 'ի Հաղբատ և կառավարէր զթէմս Հայոց – Վրաստանի, Կախէթի, Քարթլի և Ղարաբաղցի զաղթականացն, յայտնեաց զպատահական կորուստ տոհմագրոցն, խնդրեաց 'ի նմանէ որպէս քաջածանօթ ծագմանց Ղարաբաղցի զաղթականաց և սահմացաւ ոիր ստուգաբանութեան տոհմին Երուանդեանց: Վասն ստուգութեան այսր վկայականի ձեռագրեցին բազումք 'ի ծերունեաց: Եւ ապա Ճաքարիս իշխանն կարդեաց Երուանդ Խիլանէսին զիւղապետ և միանդամայն կառավարիչ Պղնձէհանքի և վերակացու 'ի վերայ Յոյն մշակացն: Ճայսօրինակ ազգաբանական զրուած, վասն ականաւոր տանց Լոռեցւոց և Զորագետցւոց, զրոցաբանութիւնս ծերունեաց, և հատուկտոր վէպս, վերաբերեալս

առ տեղական աղջային պատմութիւնս, շատ դրեցի ՚ի լիշտակարանի խմում, բայց զինուորական ծառայութիւնք իմ և անյաջողակ դիպուածքս ոչ թուլատրեցին ինձ ՚ի լոյս ածել. ՚ի վերջ ամենայնի երբ թողի զասպարէղ ծառայութեան՝ կրկին գնացի ՚ի Հայրենիս իմ ՚ի Հաղբատ, և անյապաղ հրաւիրեցալ ՚ի Վանահօրէն Սանահնի Վարդան արքեալիսկոպոսէ Օձնեցւոյ ՚ի պաշտօն վարժապետութեան վանքական դպրոցի, ՚ի միտս բերի զնախկին վիպանման գրուածս լիշտակարանի խմու ՚ի միջի այսոց բազմաց և վասն աղջատոհմին Երուանդեանց, յորոց աղդէն ծաղկեալ են շատ բարեպաշտօն անձինք, և բարեկրօն քահանայք, ՚ի լրումն նախկին գրուածոցս արժան վարկալ վերատին հարցանել որպէս ծերունեաց Երուանդեանց նմանապէս և հնախօսասէր աւանդապահ որդի ՚ի հօրէ լուեալ ծերագոյն ժողովրդականաց Սանահնի, որք յատկապէս հաստատեցին զեղելութիւն բանից Յիշտակարանի իմոյ: Առաւել ևո առ այն խրախուսեցալ, զի տեսանեմ արդէն մինն ՚ի ժառանգաւորաց Երուանդեանց մեծապատիւ աղջատոհմէ արժանացեալ քահանայական աստիճանի հետզհետէ ոչ խնայէ աղջասիրական հոգւով զլոմայս իւր դնել ՚ի սեղանի աղջաշահ դործառնութեանց և Աստուածահանոյ շինուածոց. ուստի ՚ի խրախոյս լիշեալ նորընտիր քահանայի ՚ի ծերութեան խմում ՚ի բոլոր սրտէ նուիրեմ նմա զայս զրուած առ ՚ի շատացուցանել ։ Հողովով մերում զբարեգործութիւն իւր յօդում մանկաց աղջիս ի ելեղեցւոյ: Այս շնորհալի քահանայ նկարեալ ճարտար արուեստիւք և ուկեղօծ տառիւք զբարտէղ ԱՆՑԱՄՏՆ ։ Նուիրեաց Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն չարոց Տեառն ՏԵԱԿԱՐԱՅ Ա. և արժանացաւ շնորհաձիր Հայրապետական Կոնդակի, որոյ պատճէնն դնի աստանօր:

ԿՆԻՔ

# P

Ա Կ Ա Ր ՇԱԽԱՅՅ ՔՐԻՍՏՈՆԻ ԵՒ ԱՆՀԱՍՏ-  
ՆԵԼԻ ԿԱՄՈՔՆ ԱՍՏՈՒԹՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱ-  
ԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ  
ՀԱՄԱԶԻԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՆԱՐ ԱԹՈՒԹՈՅ ԱՐԱԲԱՏԵԱՆ Ա-  
ԴԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԻ  
ԷջՄԻԱԾՆԻ. Բարեկրօն Թաղէոս քահանալի Երուանդեանց  
Հայրապետական օրհնութեամբ ծանուցանեմք, զի զնկա-  
րեալն ՚ի քէն զշնորհագիծ քարտէզն հնոյն Հայաստանի  
ընկալաք հաճութեամբ ընդ ձեռն պատուելի Տեսչի Ներ-  
սիսեան Ազգային Հոգևոր Թագանոցի՝ Արշակայ Նահապե-  
տեանց, առ որ զոհացաք զԱստուծոյ՝ զտուղէն քեզ  
ալդպիսի շնորհաց. և զարմացաք լոյժ. վասն բնաձիր  
շնորհաց Աստուծայնոց ՚ի քեզ փայլեցելոց. և որովհետև  
նուիրեալ էիր զայն ճարտարարուեատ քարտէզ հնոյն Հայ-  
աստանի յանուն Հայրապետի Հայաստանեաց Եկեղեցւոյ,  
վասն որոյ և մեք այսու մերով Հայրապետական Կոնդա-  
կառ օրհնեմք զքեզ և զորս քո են ժողովուրդք. ՚ի վերայ  
այսր ամենայնի սիրելի էր մեզ ապաքէն լսել թէ՝ զիարթ-  
ընթանաս յասպարիզի քահանայական կոչմանդ և որպիսի  
վարուք և բարուք վկայաբանիս ՚ի մերձաւոր Հոգևոր  
Եշխանութենէդ, որպէս զի ըստ այնմ չափեսցուք և մեք  
զմերս Հայրապետական բարեհաճութիւն առ քեզ:

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ:

Համար 134.

՚ի 6 Մարտի 1886 ամի Փրկչական  
և ՚ի թոււականութեան մերում ԹՅԼԵ.  
՚ի Առքը Էջմիածին:

Ա Հ Վ Հ Կ







